ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 364 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ, 2.2-րդ, 127-րդ հոդվածի 2-րդ, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3՝5-րդ մասերով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի «2026 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N67-Ա որոշման 1-ին կետի՝ ո ր ո շ ու մ ե մ.

1՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս և Մեղրի բազմաբնակավայր համայնքներում 2026 թվականի հոկտեմբերի 25-ին նշանակել համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ:

2՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի նորընտիր ավագանին իր լիազորությունները ստանձնում է ոչ շուտ, քան նախորդ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման հաջորդ օրը:

3՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի նորընտիր ավագանին իր լիազորությունները ստանձնում է ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 5-րդ օրը, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի

օրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս, Տաթև, Տեղ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները համարվում են դադարած և այդ նույն օրը Գորիս միավորված համայնքի ավագանու անդամները ստանձնում են իրենց լիազորությունները:

2026-08-03 19:04:02 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 3

ք. Կապան